

Ուշ մնացած և Տժգունածները պատմութենէն էլ այս կարգի բաներ են:

Ահա ժամանակակից պոլսահայ գրողի մտահոգութիւնները: Սա գրականութիւնն է, այլ ինքնասպանութիւն:

## ԶԱՒՆ

Mars, «ԻՆՏԵՍ ԱՄՈՒՍՆԱՅԱՅ» (կադանդի գրոյց), Բաքու, 1903 թ., գ. 10 կ.

Այս գրքոյկի նիւթը մի փոքրիկ մելոդրամատիկական պատմութիւն է:

Օրիորդ Լիզան (այժմ Միֆրան էֆէնտիի կինը) և իր փոքր եղբայր Երուանդը մնում են որբ, օրուայ հացի կարօտ: Լիզան չաբաթը մի մէջիտ (1 ր. 60 կ.) վարձով ծառայութեան է մտնում մի ժյատ հարստի տուն: Կադանդի նախօրէքին քոյրն ու եղբայրը տուն են դնում Պերայի Մեծ-Փողոցով (Պոլսում): Երեկոան տեսնում է սիրուն խաղալիքները և աղերսում քրոջը գնել: Գրքով գրպանում կայ միայն 1 դահեկան (8 կոպ.), այն էլ հաղիւ չոր հաց առնելու բաւական լինի վաղուան համար: Լիզան հանգստացնել է աշխատում մանկանը, բայց տուն հասնելուն պէս մանուկը հիւանդանում է «խաղալիքի կարօտից», մանկան այդ մեծ հոգսից... և կարող է... «մեռնել» (":): Գոյրը յետ է դառնում և մի մեծ ձի է գողանում Bon Marche-ի մեծ խանութից, բերում մինչև իրանց տան դուռը և խղճի խայթ դռանով... յետ է տանում (":). «առէք, ես գողացայ, բայց խիղճս տանջեց» ասելով տալիս է դրամսրկղի մօտ նստած գանձապահին և դուրս փախչել աշխատում: Այդ խօսակցութիւնը լսում է երիտասարդ Միհրանը, խաղալիքներ, անուշիղէններ և այլն գնում տալիս է նրան... վերջն էլ հետն ամուսնանում: Իբր յիշատակ կադանդի այդ նախօրէքին, Լիզան ու Միհրանն ամէն տարի տօնածառ են սաքում և իրանց թաղի բոլոր աղքատ ու որբ երեխաներին հրաւիրում, որպէսզի տարուայ մէջ գնէ մի օր միսթարուեն խեղճ մանուկները, զուարճանան... Եւ այդ բարեգործութիւնով լիապէս բաւականանում է տիկին Լիզան—դա է նրա հասարակական հսկայական գործունէութիւնը...



Դրքոյկի լեզուի վրայ երևում է արեմտեան բարբառի լաւ ազդեցութիւնը:

Պատմութեամբ գրուած է շատ ձգձգուած ձևով: Առաջաբանը՝ ամբողջ 5 երես՝ բոլորովին աւելորդ է. կարելի էր սկսել 7-դ երեսից, և պատմութեամբ դրանով կը շահէր:

Լաւ կը լինի, եթէ այդպիսի կէս-մանկական, կէս-ժողովրդական պատմութեան հեղինակները մի քիչ զգոյշ լինեն զանազան փիլիսոփայական խոր խնդիրներ գրութեան մէջ խոթելուց: Պ. Mars-ն էլ ընկնում է այդպիսի փորձութեան մէջ՝ Ժան-Ժակ Ռուսսօի ձևով փիլիսոփայել ձգտելով: «Սակայն որքան քաղաքակրթութեամբ են մարդիկ, պարտականութեան զգացմունքը խոյս է տալիս, բարեգործութիւնը մեռնում է, և այժմ աւելի քան առաջ թշուառութիւնը մեծամեծ զոհեր է տանում... Այդ տեսակ խոր հարցեր, որոնց համար բազմաթիւ հատորներ են գրուում, չեն սաղում ժողովրդական-մանկական փոքրիկ պատմութեաներում, մանաւանդ այն սխալ ըմբռնուած ձևով, որով դրել է հեղինակը:

ԽԱԺԱԿ

---

«ՏՐԻԼԵՒ», գրամա չորս արարուածով. Թարգմանութիւն Լեոն Մելք-Աղամանի, Թիֆլիս, 1903, դին 25 կ.

---

«Տրիլլի»-ի բովանդակութիւնն ամէնքին ծանօթ է. նա շատ է ներկայացուել մեր բեմերի վրայ, և մամուլն էլ իր ժամանակին տուել է նրա համառօտ բովանդակութիւնը, կարծիքներ յայտնել, քննել նայն: Մեզ մնում է այժմ աչքի անցկացնել ներկայ հրատարակութեան լեզուն միայն:

Երբ մի անգամ ծայրից-ծայր արագ կարդացի այդ թարգմանութիւնը և գիրքը մի կողմ դրի, ինձ թւաց, որ դրա լեզուն ինձ ծանօթ է, մի լեզու, որ երբեմն գոյութիւն ունէր, բայց ոչ այսօրուան աշխարհաբարը: Այդ լեզուն արդէն մեզ համար չի՞նծու, մի տեսակ կեղծ է: Ամէն բոպէ դուք նրա մէջ կը պատահէք հնացած բառերի—ինչպէս օրինակ—մնարիս մօտ, «հէք, հէք Տրիլլի», ճամբրակ, անուշադրի սպիրտ, զարաւանդակ, նայն նայն: Կան այնպիսի արտայայտութիւններ, որոնք բոլորովին